

ՄԱՀԱԳՈՅՆ

† Հ. ՂԵՒՈՆԻ ԱԼԻՋԱՆ

Անցեալ նոյեմբերի 9-ին՝ մեր տոհմալին գրակա-
նութիւնը մի մեծ և անփոխարինելի կօրուստ ունե-
ցաւ. Վենետիկի վանքում կնքեց իր մահկանացուն մեր
գրականութեան պարծանքներից մէկը Հ. Ղեւոնդ
Ալիշանը—Աւարալի պլազուլը, Հայաստան աշխարհի
սիրահարը, այդ աշխարհի անկենդան աւերտկներին ողի
ու շունչ տօւող, նրանում ապրող լքուածներին բաւա-
գոյն ապագալի լոյսերով խրախուսող ու ոգևորող նահա-
պետը:

Հանգուցեալը ճնուել էր Պօլիս 1820 թ. յուլիսի
16-ին: Որպէս հայ-կաթոլիկ ընտանիքի զաւակ, գըպ-
րոցական հասակում նրան ուղարկում են Վենետիկ Մը-
խիթարեանների վանքը ուսանելու: Ալգտեղ աւարտե-
լով վանական ուսման դասընթացը, 1840 թուի յու-
նուարի 7-ին ձեռնադրուում է կուսակրօն քահաննայ և
նոյն վանքում զանազան ժամանակ վարում է վանա-
կան և գըպրոցական ալլ և այլ պաշտօններ:

Հ. Ալիշանի բազմաեսակ բեղուն գործունէու-
թիւնն սկսուել է համարեա նորա քահանալալու
թուականից էլ վաղ, որ ասել է՝ աւելի քան կէս դար-

1890 թ. մալիսի 3-ին տօնուեցաւ նորա գրական գոր-
ծունէութեան լինամեալ լոբելեանը:

Բացի հայերէնից, նա տեղեակ էր նաև հին ու
նոր քանի մի լեզուների և ունի այդ լեզուներով գրու-
ածքներ թէ թարգմանական և թէ ինքնուրուն. նա-

պատուաւոր ու թղթակից անդամ էր եւրոպական շատ գիտնական ընկերութիւններին:

Հայտատան աշխարհի սիրահար ծերունին, միշտ սիրուած ու մեծարուած է եղած իւր հալ ընթերցողներից, և նորա լիշտակը մեր գրականութեանը մատուցած ծառալութեանց համար՝ լաւէտ անմօռանալի կը մնալ ամեն մի հայի սրտում:

«Եռմարդի հետևեալ համարներից մէկում մենք մի քննական տեսութիւն կտանք նորա գրական երկերի մասին»:

* ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓԱՇԱ ՏԱՏԵԱՆ

Ինչպէս Ռուսաստանում, այնպէս էլ Տաճկաստանում մէկ-մէկ լաւիտենական աշխարհն են փոխադրում պետական բարձըր հալ պաշտօննաները։ Հոկտեմբերի 7-ին կ. Պօլսում կնքեց իւր մարդկանացուն հալ պետական ամենաբարձր պաշտօննանեներից մէկը, Յարութիւն Տատեանը, որ իւր գերազանց ծառալութիւնների չնորհիւ փաշալութեան բարձր տիտղոսին էր արժանացել ուսմիկ կառավարութիւնից։

Յարութիւն փաշան լաւանի հալ բարեգործ և Օսմանեան պետութեան վառողապես Յովհաննէս Պէլ Տատեանի որդին էր, ծնուած Ալմասիֆանում 1830 թ։

Տատեանն իր միջնակարգ ու բարձր կրթութիւնը ստացաւ Փարիզում և վերադառնալով կ. Պօլս՝ հօր ազդեցութեան և Փրանսերէնի հմտութեան շնորհիւ շուտով պաշտօն ստացաւ Օսմանեան արտաքին գործոց նախարարութեան մէջ և այնուհետև զանազան Պետական լանձնարարութիւններ կատարելով՝ հետզհետէ բարձր աստիճանների հասաւ և 1865 թ. Փարիզի տաճկական դեսպանութեան առաջին քարտուղարն եղաւ. այդ դեսպանատանը 3 տարի ծառալելով՝ նորից կ. Պօլս վերադարձաւ և 1868 թ. նշանակուեց պետական խորհրդի անդամ և մեծ եպարքոս Ալի փաշալի համակրութիւնը վախեց. 1872 թ. Մահմուտ Նէտիմ նախարարապետի օրով բարենորոգմանց բարձր լանձնաժողովի անդամ նշանակուեց, ապա եղաւ պետական արմեթղթերի վարչութեան անօրէն, իսկ

1873—1874 թ. ելեմակից (Փինանսների) նախարարութեան խորհրդական, 1875 թ. արտաքին գործոց նախարարութեան խորհրդական նշանակուեց և ալդ պաշտօնի մէջ էլ մնաց մինչև մահ։ իսկ վլյուգրութեան աստիճան ստացաւ 1887 թ. և պետական ամենաբարձր պատումնշանը՝ «ականակուու իֆթի-իտար»։

Ակադիմով նաև պետական բարձր պաշտօններ է վարում՝ թէ իրեն քաղաքագէտ և թէ իրեն ելեմտագէտ (Փինանսիստ) և իւր պաշտօնների չնորհիւ գործ ունենալով եւրոպական օտար պետութեանց հետ՝ համարենա բոլոր մեծ ու փոքր պետութիւններից շքանշաններ է ստանուու։

Իրեն հալ անհատ՝ թէս մեծ մասամբ իրեն հեռու է պահել ազգալին շրջանից, բայց և ալնալիս մի երկու անդամ տաճկանալոց Ազգալին ժողովի նախագահ է եղել և 1896 թ. քաղաքական ժողովի նախագահ ընտրուելով՝ իր երկարամեալ դիւնապիտական փորձառութեամբ և բարձրագորն արարերութիւնների չնորհիւ օգտակար է հանդիսացել իւր հայրենակիցներին։

Յարութիւն փաշալի որդին, Տիգրան Պէլ Տատեան, «պաշտօնէից ընտրութեան բարձրագորն լանձնաժողովի» անդամէ, իսկ դուստրը՝ տիկլն Նադաշեան Ականաներական կանանցին առաջին թարգմանուհի։

Յարութիւն փաշալ Տատեանի թաղումը տեղի է ունեցել մեծ շքով ու հանդիսավլ, Օսմաննեան պետութեան հաշուով, Պէշիկթաշի եկեղեցու մէջ։ Եկեղեցական արարողութեանը ներկալ են եղել բոլոր եւրոպական գեսալանատների ներկայացուցիչները։

Ք. Տիգրանիթեննօթ

Անցեալ նոլեմբերի 17-ին կարճատեև հիւանդութիւնից քետու վախճանուեց Դաւիթ Տէր Դաւթեանցը երիտասարդ հասկում։

Հանգուցեալը աւարտել էր Ներսիսեան Դպրոցը և ուսուցչի պաշտօն էր վարել քաղաքիս մի քանի ծխական դըպրոցներում և վերջին տարիները մինչև իւր մահը վերակացու էր Ներսիսեան դպրոցում։

Տէր Դաւթեանը գործում էր հալ գրական ասպարիզում, վրացերէնից բաւական լաջող թարգմանութիւններ և փոխադրութիւններ անելով, որոնցից լատնի են քանի մի կատակերգութիւններ և խմբագրում էր Ռուսումաշվիլու վրացերէն հանրադիտական բառարանի հալկական բաւական հարուստ բաժինը, Դժբախտաբար նա չաւարտեց իւր ալդ աշխատութիւնը, ալ մինչև ալժմ լուս է տեսել միայն և հատոր.

Նա աշխատակցում էր և հալ թերթերին, վերջերս նաև Ալոմալին, իսկ վրացերէն Ալվալի՝ շաբաթաթերթի մշտական աշխատակիցն էր համարում, ուր ունի տպած հալ գրականութեան վերաբերեալ բազմաթիւ լոդուածներ.

Հանգուցեալը ծանրաբեռնուում էր մնձ ընտանիքով և նիւթական շատ նեղ վիճակի մէջ էր, որ և անշուշտ նորամահուան պատճառներից մէկն եղաւ.

Ալսպէս անցաւ մի բեմնաւոր և ապագալ ունեցող կեանք, որ աւելի հալածուած էր քան գնահատուած որոց կողմից որ արժան էր:

Յաւիտենական հանգիստ դժբաղա գրական գործչին...

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.

«ԼՈՒՄԱՑԻ» ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐԻՆ. «Խմբագրութիւնը իւր խորին շնորհակալարս թիւնն է լատնում ալն անձանց, որոնք հեռագիրներով և նամակներով իրենց խնդակցութիւնն էին լատնել «Ալոմալի» երկամսեալ դառնալու առթիւ, ՔԻՇՆԵՒ կրպէին. լոդուածը ստացանք. կաշխատենք տպել միւս համարում:

ԱԽԱԼՑՈԱ. Ե. Մեծատուննանցին. Ձեր ուղարկած Ա. Նաղարեանի նամակները կտպագրուեին հետևեալ համարներում, ՄՈՒԹՃԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ. «Ալոմալի» մասին մի խմբագրական նկատողութիւն էք տպել «Մուրճի» նոյեմբերի համարում, շուալլելով մեր հասցէին Աղերական» «տէրտէրական» և ալլ անմիտ խօսքեր. Մենք չգիտենք թէ ինչ կապ ունի մեր կոչումը գրական ալս կամ ալն խնդիրների հետ, ալն ժամանակ մենք էլ պէտք է իրաւունք ունենալինք ասել, որ նաւթալին գործերը և վաճառական նութիւնն սկսել են՝ աղջեցութիւն ունենալ գրական